

ԴԱՍ 6. ԷԿՈԳԱՆՁԱՏՈՒՓ (1-4-րդ դասարան)

Դասի նպատակը

Օգնել աշակերտներին ավելի մոտիկից ճանաչել հայրենի բնության մեջ աճող բույսերի տեսակները, բույսերը մամլելով, չորացնելով և պահպանելով՝ դասարանի համար պատրաստել հատուկ «Էկոգանձատուփ»:

Այս «գանձատուփի» մեջ ուսուցիչն ամեն շաբաթ կարող է թաքցնել բնությունից վերցված մի նմուշ, որպեսզի երեխաները դասի ժամանակ կռահեն, թե ինչ է այնտեղ: Կարելի է վերցնել թիթեռի բոժոժ, սոճու կոն, տերև, սունկ և այլն: Կամ կարող եք խմբային քննարկումների համար գրականությունից ընտրել մեջբերումներ, գրել թղթիկների վրա ու պահել տուփի մեջ:

Անհրաժեշտ պարագաներ

Կափարիչով տուփ (կոշիկի տուփի մեծության), մի սրվակ մազի լաք, որով ծաղիկները պետք է ամրացնել տուփի կափարիչին, սոսինձ: Այս պարագաներն անհրաժեշտ է ձեռք բերել նախապես և իմանալ, թե որն ինչի համար է: Եթե սոսինձ չունեք, կարող եք ինքներդ պատրաստել այն հետևյալ բաղադրատոմսով:

Ինչպես պատրաստել ջրում լուծվող սոսինձ

Եթե հնարավորություն չունեք խանութից բարձրորակ սոսինձ գնել, վերցրեք մի քիչ ցորենի ալյուր, ավելացրեք սառը ջուր: Թույլ, ջրիկ խմոր պատրաստեք (նրբաբլիթների խմորի պնդության): Խմորը լավ հարեք, որ գնդիկներ չմնան և մարմանդ կրակի վրա անընդհատ խառնելով՝ տաքացրեք մինչև եռալը: Օգտագործելուց առաջ խառնուրդը պետք է հովացնել: Սոսինձը պահեք ամուր փակվող ամանում: Եթե խառնուրդը պնդանա, կարող եք մի քիչ գոլ ջուր ավելացնելով փափկեցնել այն:

Բնական սոսինձի ստացման աղբյուր

Խատուտիկները և այլ կաթնաբույսեր պարունակում են բնական լատեքս (կաուչուկային կաթնահյութ), որը կարելի է օգտագործել որպես սոսինձ: Սա այն դեպքում, եթե քիչ քանակությամբ սոսինձ է պետք: Կաթնահյութն օգտագործելուց անմիջապես հետո անպայման լվացվեք, քանի որ մաշկի վրա երկար մնալով՝ այն կարող է ցան առաջացնել:

Արվեստի դասի ժամին կարող եք աշակերտներին հարցնել. «Ինչն է են որոշ բույսեր այսքան կայուն»: Պատասխանը հետևյալն է. «Այս քիմիական նյութերը կենդանիներից ու միջատներից պաշտպանվելու միջոց են այն բույսերի համար, որոնք փշեր կամ արտաքին պաշտպանական միջոցներ չունեն»:

Դասի ընթացքը

Նախապես պատրաստել և երեխաներին ցուցադրել թղթի կամ սովարաթղթի վրա արված ավարտուն աշխատանքի մի նմուշ:

Նախատեսեք զբոսանք դպրոցի բակում, մոտակա զբոսայգում կամ անտառում: Քայլե՛ք երեխաների հետ մոտակա ոչ բանուկ փողոցի երկայնքով. այստեղ կարելի է գտնել ծաղկող մուլախոտերի շատ տեսակներ: Եթե զարուն է, հավաքե՛ք ծաղիկներ, եթե՝ ոչ, ընտրե՛ք հետաքրքիր տերևներ ու գույներ ունեցող բույսեր: Փաթաթվող բույսերը կարելի է օգտագործել որպես լրացուցիչ զարդարանքի թելեր:

Կրկին հիշեցնում ենք՝ երեխաների աշխատանքները պետք է դառնան ձեր դասասենյակի ձևավորման կարևոր բաղկացուցիչը: Ծնողների հետաքրքրասիրությունը շոյելու համար անպայման որոշ աշխատանքներ երեխաների հետ տուն ուղարկեք:

- Հավաքե՛ք գույնզգույն ու բազմաձև ծաղիկներ ու տերևներ:
- Կարելի է աշակերտների մի փոքր խմբի հանձնարարել զարդարել «Էկոգանձատուփը»:
- Պատրաստե՛ք սոսնձված բույսերով մի կափարիչ: Օգտագործե՛ք ձեր պատրաստած սոսինձը կամ բույսերի կաթնահյութը: Ծաղիկներն ու բույսերն ամրացրե՛ք մազերի լաքով: Ի դեպ, ծաղիկների վրա մազերի լաք փչելն օգնում է դրանք ավելի երկար պահպանել:

Ամփոփում

Ասե՛ք երեխաներին, որ հաջորդ դասին իրենց «Էկոգանձատուփի» մեջ մի հատուկ բան է լինելու պահված:

Առաջադրանք

Այցելե՛ք ձեր տան մոտ գտնվող դեղատուն և պարզե՛ք, թե ինչ բույսերից պատրաստված դեղամիջոցներ կան (թուրմ կամ չոր զանգված): Կազմե՛ք բույսերի ցանկ (անվանումներով և նկարներով):

Ըստ «Բացահայտելով ինքս ինձ և տիեզերքի մնացած մասը» ծրագրի, Մանկական հրատարակչություն, 1974 թ. (Children's Press. 1974)

ԴԱՍ 7. «ԷԿՈՐՆԱԽՈՒՅՁԻ ՈՐՄԸ»

(Խաղ, 1-4-րդ դասարան)

Դասի նպատակը

Այս դասի շնորհիվ աշակերտները սովորում են զանազանել բնական էկոհամակարգի կենդանի և անկենդան բաղադրիչները, գնահատել բնական միջավայրում գոյություն ունեցող գույների, չափերի ու ձևերի բազմազայնությունը: Ընդհանուր առմամբ, առաջադրանքն աշակերտների և ուսուցիչների համար առիթ է դառնում խոսելու բնության և նրա մեջ մարդկության դերի մասին:

Անհրաժեշտ պարագաներ

Վերցրե՛ք «Էկոգանձատուփ»-ը: Նրա մեջ տեղադրե՛ք ներքևում բերված «Էկոբնախուզական» ցանկից մի առարկա: Առաջարկե՛ք աշակերտներին կռահել, թե ինչ է պահված տուփի մեջ: Կարող եք հուշումներով օգնել, սակայն դրանք չպետք է լինեն ուղղակի: Կարելի է խրախուսել երեխաներին, սակայն թույլ տալ, որ յուրաքանչյուրն ինքը պատմի իր տեսածն ու զգացածը: Նրանք պետք է պատճառաբանեն, թե ինչու են հենց այդ ընտրությունը կատարում: Պետք է թույլ տալ, որ երեխաներն արտահայտվեն՝ առանց դրական կամ բացասական որակումներ տալու:

Կազմե՛ք երեքից չորս հոգանոց խմբեր: Յուրաքանչյուր խմբի համար պատրաստե՛ք առարկաների առանձին ցանկ:

Դասի ընթացքը

Կազմակերպե՛ք էքսկուրսիա դեպի մոտակա անտառ կամ զբոսայգի: Բացատրե՛ք աշակերտներին, որ այսօր խաղալու եք «Էկոբնախուզակի որս» խաղը: Հանձնարարե՛ք նրանց մոտ 15 րոպե շրջել և գտնել «Էկոբնախուզական» ցանկում նշված պարագաներից մի քանիսը: Առարկաները գտնելուց հետո նրանք պետք է գրեն դրանց անուններն իրենց նկարագրությունների դիմաց: Վերադառնալով՝ խմբերը պետք է միմյանց պատմեն, թե յուրաքանչյուր նկարագրության համար ինչ են գտել:

Ավելի փոքրահասակ երեխաների հետ սա կարելի է կատարել որպես բանավոր վարժություն: Երեխաները կխոսեն, յուրաքանչյուրը կսկսի «Ես տեսնում եմ...» բառերով, իսկ մյուսները կփորձեն կռահել առարկայի անունը: Նա, ով ճիշտ կկռահի, ինքը ցանկից կընտրի մյուս առարկան: Խաղը կշարունակվի այնքան ժամանակ, մինչև ցանկը սպառվի: Կարող եք աշակերտների հետ շրջել, մոտենալ առարկաներին և ավելի մանրամասն զրուցել դրանց մասին:

«Էկոբնախուզական» ցանկ

«Ես տեսնում եմ... »

մի բան, որը գեղեցիկ է

մի բան, որը սառն է

մի բան, որը չոր է

մի բան, որը մազմզոտ է

մի բան, որը կոշտ է

մի բան, որը ծանր է

մի բան, որը տաք է

մի բան, որը հսկայական է

մի բան, որը ձգվող է

մի բան, որը ձվաձև է

մի բան, որը սրածայր է

մի բան, որը բնության մասնիկ չէ

մի բան, որը փշոտ է

մի բան, որը խորդուբորդ է

մի բան, որը կլոր է

մի բան, որը սուր է, եւ այլն... .

